ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Պատմության ֆակուլտետ
Հնագիտության և ազգագրության ամբիոն

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր

# ՀԱՅՈՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Մասնագիտական դասընթացի

*ԵՊՀ պատմության ֆակուլտետի «հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար*

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2022

ՀՏԴ 39(=19):93/94
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3
Ն 251

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝
**Հարությունյան Հ. Թ.**, պատմագիտության թեկնածու, դոցենտ

**Նահապետյան Ռ. Ա.**
Ն 251 Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները: Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիր: ԵՊՀ պատմության ֆակուլտետի «հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար/Ռ. Ա. Նահապետյան: -Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 82 էջ:

Ուսումնամեթոդական ուղեցույց-ծրագիրն ընդգրկում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի «հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության 3-րդ կուրսում կարդացվող հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրներին նվիրված դասընթացը, որի շրջանակում Հայաստանը ներկայացվում է ոչ միայն մարդագոյացման, այլև հնագույն քաղաքակրթության՝ երկրագործական, անասնապահական, տնայնագործական, յուրացնող և օժանդակ մշակույթների, ժողովրդական ավանդական փոխադրության և կապի միջոցների առաջացման հնագույն օրրան: Ուղեցույցը բաղկացած է մեթոդական դիտարկումներից, դասընթացի կրթական արդյունքներից, բովանդակությունից: Վերջում տրված է գրականության ցանկ, որը ներառում է սկզբնաղբյուրներ, գիտական աշխատություններ և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

ՀՏԴ 39(=19):93/94
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3

ISBN 978-5-8084-2578-1

© ԵՊՀ հրատ., 2022
© Նահապետյան Ռ. Ա. 2022

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

**Դասընթացի նպատակները:** «Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները» դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել կայուն գիտելիքներ ու հմտություններ. 1. Տալ գիտելիքներ հայոց ավանդական և ժամանակակից գյուղական արտադրական մշակույթի, յուրացնող և օժանդակ տնտեսաձևերի, ժողովրդական փոխադրության հարմարանքների և կապի միջոցների մասին: 2. Սերմանել համեմատական վերլուծության հմտություններ՝ գյուղական մշակույթների առանձին ոլորտների ծագման, զարգացման ընթացքի, տեղական ինքնատիպ և առանձնահատուկ գծերի, դրանց համաշխարհային նշանակության նվաճումների վերաբերյալ: 3. Բացահայտել և հինավուրց աղբյուրների՝ հնաբուսաբանության, հնակենդանաբանության, հնագիտական, պատկերագիր-ժայռապատկերային, հնագույն գրավոր՝ սեպագիր, հին հունական և հռոմեական անտիկ և միջնադարյան հայ սկզբնաղբյուրների, դաշտային ազգագրական նյութերի և ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել Հայկական լեռնաշխարհը՝ այդ մշակութային համալիրների առաջացման հնագույն հայրենիքներից մեկը, հայ ժողովրդական դարավոր հմտությունները, կուտակված վիթխարի փորձը, հավատալիքների համակարգը:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

**ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**

Դասընթացը հաջողությամբ յուրացրած ուսանողը՝

1. կճանաչի Հայկական լեռնաշխարհը և պատմական Հայաստանը՝ որպես քաղաքակրթության հնագույն օջախ և ուրույն պատմամշակութային տարածաշրջան՝ պատմաազգագրական շրջանացման, ինչպես նաև տնտեսամշակութային տիպաբանության տեսանկյունից:

2. Կծանոթանա գյուղական մշակութային համալիրների հիմնախնդիրների ուսումնասիրության պատմությանը, կտեղեկանա դրանց վերաբերյալ արված հետազոտությունների արդյունքների և դեռևս առկախ խնդիրների մասին:

3. Կունենա հստակ պատկերացումներ գյուղական մշակույթի հիմնարար համալիրների ծագման, զարգացման ընթացքի, փոխշփումների, պատմաազգագրական տարբեր շրջաններում կրած ազդեցությունների, տեղական ընդհանուր և յուրահատուկ գծերի, ժողովրդական դարավոր փորձի ու հմտությունների մասին:

4. Կկարողանա ինքնուրույն վերլուծել ազգագրական նյութն ու այն դիտարկել Հայաստանի հարևան էթնիկ հանրությունների հետ համեմատությունների մեջ:

5. Հնարավորություն կունենա լիովին ըմբռնելու դրանց ուսումնասիրության նպատակով մշակված մեթոդներն ու մեթոդաբանությունը:

**բ. Գործնական մասնագիտական կարողություններ**

1. Որպես պատմաբան-ազգագրագետ գիտակրթական և հետազոտական աշխատանքում կկիրառի իր ձեռք բերած հարուստ աղբյուրագիտական (հնագիտական գտածոներ, ժայռապատկերներ, սեպագիր աղբյուրներ, օտար և հայ մա-

տենագիրների տեղեկություններ, ուղեգրություններ, ազգագրական դիտարկումներ և այլն) ժառանգությունը:

2. Արտադրական մշակույթի ավանդական շատ տարրերի պահպանումն ու կիրառությունը ժամանակակից տնտեսամշակութային կյանքում, մասնավորապես երկրագործաանասնապահական-տնայնագործական ավանդների կիրառությունը մեր օրերում կծառայի ժողովրդական տնտեսությանը:

3. Ժողովրդական կենցաղի ու մշակույթի հարուստ ժառանգության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքների փոխանցումը նոր սերնդի ժամանակակից աշխարհըմբռնումների, էթնոմշակութային դիմագծի ձևավորման ու կայունացման համար կունենա բացառիկ կարևոր նշանակություն:

4. «Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները» մասնագիտական դասընթացի տեսական, մեթոդաբանական հիմնախնդիրների, հայոց էթնոմշակութային ժառանգության, վերջինիս առանձին ոլորտների վերաբերյալ լավ իմացության շնորհիվ ապագա պատմաբան-ազգագրագետը, մանկավարժը կկարողանա կրթական համակարգում հավուր պատշաճի ներկայացնել հայոց մշակույթն ու վերջինիս առանձին համալիրները, ինչն էական է պատանու աշխարհայացքի ձևավորման, աշխարհընկալման և բազմաթիվ այլ առումներով:

## ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Դասախոսություն և քննարկում: Որպես կանոն՝ դասախոսությունները կարդացվում են սլայդներով (power point

presentation), ինչը մատուցվող նյութը վիրտուալ հնարավորությամբ առավել հեշտ ընկալելի է դարձնում: Ժամանակի ճիշտ օգտագործման տեսանկյունից ելնելով՝ մշակութային տարբեր երևույթների վերաբերյալ տեսանյութերի դիտումը հանձնարարվում է կատարել տանը, ոչ թե լսարանում:

2. Դասախոսության ունկնդրում, քննարկումներին մասնակցություն: Նախապես տեղեկացվում են քննարկման թեմաները: Կախված թեմայի բնույթից՝ քննարկման ժամանակ հիմնախնդրի վերաբերյալ ուսանողը կարող է արտահայտել անհատական կարծիք կամ հետազոտական փոքրիկ խմբի եզրահանգումը: Վերջին հանգամանքը կոչված է ուսանողի մեջ զարգացնելու խմբային աշխատանք կատարելու հմտություն:

3. Հանձնարարված գրականության մշակում: Դասընթացի յուրահատկությունից ելնելով՝ խորհուրդ է տրվում օգտվել նաև համացանցից, թանգարանային ցուցանմուշների դիտումից:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատման հիմքում դասընթացի նպատակներն ու կրթական վերջնարդյունքներն են: Դասընթացի գնահատումն իրականացվում է երկու ընթացիկ և մեկ եզրափակիչ քննություններով:

1. 1-ին ընթացիկ քննություն. անցկացվում է ուսանողի բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, 5 միավոր առավելագույն արժեքով:
2. 2-րդ ընթացիկ քննություն. անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի՝ ռեֆերատի գնահատման հիման վրա, 5 միավոր առավելագույն արժեքով:

3. Եզրափակիչ քննություն. անցկացվում է բանավոր՝ 10 միավոր առավելագույն արժեքով, նպատակ ունի ստուգելու դասընթացից ուսանողի ստացած գիտելիքները: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Բակալավր ուսանողի հանրագումարային գնահատման առավելագույն արժեքը 20 միավոր է (ընթացիկ քննություններ՝ 10 միավոր, եզրափակիչ քննություն՝ 10 միավոր):

Քանի որ դասընթացը նաև կոչված է զարգացնելու վերլուծական և համադրական հմտություններ, ուստի ընթացիկ առաջին քննության ժամանակ ուսանողը պետք է ոչ թե ուղղակի վերաշարադրի նյութը, այլ արտահայտի վերլուծության եղանակով: Ընթացիկ առաջին քննության ընդհանուր թեմատիկան ուսանողին տրվում է նախապես, հարցաշարի միջոցով, սակայն քննության ժամանակ բուն հարցադրումները տրվում են տեղում, որպեսզի դասախոսությունների և գրականության հիման վրա ուսանողը վերլուծական պատասխան ներկայացնի:

Ռեֆերատի թեմաները տրվում են կիսամյակի սկզբում: Ելնելով ուսանողների ցանկությունից՝ ընթացիկ երկրորդ քննության օրը յուրաքանչյուրը կարող է բանավոր համառոտ ներկայացնել ռեֆերատը, որը նաև մյուս ուսանողների գիտելիքների աճին կծառայի: Ռեֆերատի գնահատման դեպքում ևս կարևորվում են ուսանողի վերլուծական, տրամաբանական կարողությունները:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածություն:**

**Հայոց գյուղական մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրները հայ ազգագրական գիտության մեջ:**

**Ուսումնասիրության դիտանկյունները:**

Ներկայացվող դասընթացը նվիրված է հայոց գյուղական մշակույթի ավանդական և ժամանակակից համալիրներին՝ երկրագործական, անասնապահական, տնայնագործական, յուրացնող և օժանդակ տնտեսաձևերին, ժողովրդական ավանդական փոխադրության և կապի միջոցներին, դրանց վաղնջականության, զարգացման ինքնատիպ՝ պատմաաշխարհագրական պայմանների, տնտեսամշակութային զարգացման մակարդակի, ազգային ավանդույթների, մասնավորաբար պատմաքաղաքական իրողությունների, հարևան ժողովուրդների հետ ունեցած շփումների, ներգաղթերի, հարկադրական արտագաղթերի ու այլ գործոններով պայմանավորված առանձնահատկություններին:

Ուսանողին ներկայացվում է գյուղական մշակույթների աղբյուրագիտական հենքը՝ հնաբուսաբանական, հնակենդանաբանական, հնագիտական պեղումներից հայտնաբերված նեոլիթյան (Ք.ա. IX-VI հազ.), էնեոլիթյան (Ք.ա. V-IV հազ. I կես), վաղ բրոնզի (Ք.ա. 3500-2400/2300), միջին բրոնզի (Ք.ա. 2400/2300-1500), ուշ բրոնզի (Ք.ա. 1500-1200), վաղ երկաթի (Ք.ա. 1200-820), լայն տարածում ստացած երկաթի (Ք.ա. 820-VI դար) հարուստ գտածոների, Ք.ա. IX-I հազ. Ժայռապատկերների, Ք.ա. III-I հազ. սեպագիր (շումերա-աքքադական, ասորեստանյան, խեթական, ուրարտական, հին պարսկա-

կան) գրավոր սկզբնաղբյուրների, անտիկ՝ հունական և հռոմեական ու վաղ, միջին և ուշ միջնադարյան հայ մատենագրության, նաև օտար (արաբ, եվրոպացի, ռուս) և հայ ուղեգրող ճանապարհորդների բազմահարուստ տեղեկություններին, ցարական Ռուսաստանի՝ Անդրկովկասին և Հայաստանին վերաբերող տեղեկատվական ժողովածուների, դաշտային ազգագրական հետազոտությունների, մասնագիտական գրականության տվյալները, դրանց կարևորությունը, արդիական, տնտեսամշակութային և գիտաճանաչողական նշանակությունը:

# ԹԵՄԱ 1. ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ: ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## *1.1. Հայկական լեռնաշխարհը որպես երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն:*

Հնաբուսաբանության, հնագիտական տվյալների ու գրավոր աղբյուրների՝ սեպագիր արձանագրությունների, անտիկ գրականության, միջնադարյան հայ պատմագրության, օտար ճանապարհորդների ուղեգրությունների, բանահյուսական ու գեղարվեստական գրականության և ազգագրական մասնագիտական գրականության համաձայն՝ Հայկական լեռնաշխարհը հացահատիկային կուլտուրաների, բանջարաբուծության և բոստանային կուլտուրաների մշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության հնագույն կենտրոններից է:

Երկրագործության ուսումնասիրության հիմնահարցը հայ ազգագրության մեջ (Վ. Բդոյան, Ս. Երեմյան, Է. Բայբուրդյան, Է. Խանզադյան, Հ. Մալխասյան, Ս. Հոբոսյան և ուրիշներ): Դաշտամշակության ամենակարևոր ճյուղերը:

## *1.2. Բուսահավաքչությունը և դրա դերը երկրագործության առաջացման գործում:*

Բուսահավաքչությունը որպես երկրագործության նախօրյակ: Հավաքչության մնացուկների՝ մինչև մեր օրերը հարատևման սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական, բնաէկոլոգիական և աշխարհագրական դրդապատճառները: Կինը՝ երկրագործության հայտնագործող:

**Բրիչային երկրագործություն:** Բրիչային երկրագործությունը որպես արորային երկրագործության նախատիպ: Բրիչային կամ մարկեղային երկրագործություն, դրանց արտադրամիջոցներն ու աշխատաեղանակները: Փայտե և մետաղե բրիչներ, դանակներ և այլն, դրանց զարգացման էվոլյուցիան: Բրիչածայրերի քարե, ապա մետաղե օրինակները բրոնզի դարում: Զենք-բրիչ և բրիչ-զենք դերերը: Փայտե գավազանաձև գործիքները որպես հետագա բոլոր բրիչների նախատեսակներ: Հողուրագի, եղանի և բահի առաջացումը: Բրիչների տեսակները: Ձեռքի և կրծքի ճնշմամբ, ոտքի ճնշմամբ և ձեռնահարվածով գործող բրիչներ:

**Տղամարդու մասնակցությունը և երկրագործության դերի բարձրացումը**: Հարվածային գործիքները՝ մուրճը, կացինը, քլունգը, փայտատը և հողուրագը, որպես հեղաշրջում երկրագործության մեջ: Միակողմանի և երկկողմանի բրոնզե ու երկաթե բրիչների գործածության արդյունքները: Բահի և եղանաձև գործիքների (լեխտր) դերերը: Այգեգործական բրիչներ և հատոցներ. այգեգործական կտրիչներ (ճյուղերը և որթերը հատելու համար): Կացնի դեր կատարող դանակաձև-մանգաղաձև, երկարաշեղբ գործիքներ և այլն: Նյութերի վերամշակման և ամբարման նախնական պարագաներ (տաշտակներ, աղորիքներ, թակեր, մորթուց պատրաստված փռոցներ և այլն): Կինը բրիչային երկրագործության հիմնական աշխատավոր:

Նախնական մշակաբույսեր. հացաբույսեր, բանջարեղեն և բոստանային կուլտուրաներ:

*1.3. Արորագութանային երկրագործություն:*

Արորի և գութանի առաջացումը, կառուցվածքը, տեխնիկա-տեխնոլոգիական առումները: Երկրագործական ավանդական վարող տեխնիկան ըստ պատմաազգագրական շրջանների, տիպաբանությունը:

Արորագութանային երկրագործության ծագումը, պատմական զարգացման առանձնահատկությունները, բնորոշ գծերը, հիմնական ձևերը, համակարգերը հայոց մեջ: Վարող գործիքի առաջացման, պատմատնտեսական և աշխարհագրական՝ բնաէկոլոգիական գործոնները: Արորը որպես բրիչների համակցության արդյունք: Բրիչային հողագործությունից արորայինի անցման տնտեսական շարժառիթները, նստակեցությունը որպես կարևոր պայմաններից մեկը: Նստակեցության և անասնապահության դերը: Մարդու և անասունների ուժով գործող արորն ըստ բանահյուսական տվյալների՝ «Սասնա ծռեր» էպոսի և երկրագործական պաշտամունքի:

**Վարուցանքի ավանդական համակարգը հայոց մեջ:** Արորի և գութանի առաջացման ժամանակը, դրանց կառուցվածքը, գործառույթները, տարածքային խմբերը, դրանց տարբերակման տնտեսամշակութային, աշխարհագրական, բնաէկոլոգիական, պատմաքաղաքական, ազգային ավանդութային գործոնները: Արորագութանային համակարգի հարատևումը մինչև XX դարի կեսերը:

Արորի տեսակները.

ա. Փոքր արոր, նրա տեղական անվանումը, նրա տարրերի անունները, նկարագիրը:

բ. Մեծ արորի տեղական անվանումը, դերը և տարբերությունը նախորդից:

գ. Ծարքացան արոր (տրի խարոր) և դրանով կատարվող ցանքի անվանումը: Սրան հարակից այլ գործիքները՝ տափան, փոցխ, կեղնակալված արտի փխրեցնող միջոցներ և այլն:

դ. «Անճար» կամ «բէչարա» կոչված գութան, սրա կառուցվածքային տարրերը, խոփի ձևը, ձևիչ ունենալը կամ չունենալը, անիվներով կամ անանիվ լինելը և պատճառները:

ե. Մեծ գութան, տեղական անվանումը և կառուցվածքը: Գութանի դերը երկրագործության մեջ և առավելությունները նախորդների համեմատ: Արորներին և գութաններին լծվող լծկանների թիվը: Գութանի լծերի անվանումները: Վարող անձնակազմը և նրանց կոչումներն ըստ աշխատանքի:

### *1.4. Վարուցանքի ավանդական համակարգը հայոց մեջ, դրա մերօրյա դրսևորումները:*

Գութանավարի ընկերություն կազմակերպելը հերկի շրջանում: Ընկերության կոչումը: Ընկերության անդամների իրավունքներն ու պարտականությունները: Գութանի մաճկալի ընտրությունը: Գութանատերը որպես մշտական մաճկալ, փոփոխության դրդապատճառները: Գութանավարի աշխատանքային ողջ ընթացքի նկարագիրը:

Արորներով կամ գութաններով հերկելու կամ վարելու ձևերը (արտի երկարությամբ, լայնությամբ կամ անկյունից ակոս բացելը և այլն): Կրկնավարը խաչաձև, շեղակի և այլ ձևերով կատարելը: Հերկի տեղական կոչումը: Հերկի կոշտերը փշրելու պարագաները՝ թակերը, բահերը: Լծկանների տեսակները՝ եզներ, գոմեշներ, ձիեր, էշեր, կովեր, դրանցից ամենաբնորոշը:

Ցանքի նախապատրաստումը գարնանացանից և աշնանացանից առաջ. սերմի զտումը, գործիքների նորոգումը, «լծկանները խամից հանելը», դրանց ուղեկցող սովորությունները, նախապաշարումներն ու սնահավատությունները:

Մաճկալի և սերմնացանի ընտրությունը (ամուրի թե ամուսնացած), նրա վարքագիծն ընտանիքում և արտում: Նրան ժուժկալության մղող պատճառները: Ցանքի ընթացքում սերմնացան-մաճկալը զգեստափոխվում էր, հանում էր շորերը և տրեխները, թե՞ չէր հանվում այնքան ժամանակ, մինչև որ մարմնի վրա և տրեխների մեջ հատիկները ծլեին: Մանրամասն նկարագիր: Ցանքի ամբողջ ընթացքի նկարագիրը. վարելը, ցանելը, փոցխելը, կոշտերը փշրելը, հարթեցնելը, բաց մնացած տեղերը բահով փորելը, քարհավաքը, քաղհանը, ջրելու ձևերն ու կարգը, ջրաբաշխի ընտրությունը, նրա վարձատրությունը: Վնասատուների դեմ պայքարի ձևերը (մկների, թռչունների, կենդանիների, մորեխի, թրթուրների դեմ), իրական և սնահավատ գործողությունները: Պարարտացում. նյութը, կարգը, ժամանակը, տեղափոխումը:

**Շարքացան և շաղացան համակարգեր, արդյունավետությունը:** Շաղացանն իբրև ընդհանրացած ձև: Շաղացանը և ոռոգվող տարածությունները: Շարացանի և շաղացանի ժամանակագրական կարգի հարցի շուրջ: Շարացանը որպես անջրդի հողերի վրա կիրառվող եղանակ: Շարացան հողագործության համակարգը Վանա լճի ավազանում և դրա պատմական կապը ուրարտական երկրագործության հետ: Շարացանի վարող գործիքները, հարթիչները, հնձող գործիքներն ու հնձելու ձևերը: Շարացան համակարգի հարատևումը Վանա լճի ավազանում մինչև 1915 թ.:

**Հարթիչների տեսակները.** փոցխեր, փայտե և ցախե տափաններ, փայտե և ցախե տափանների համակցումը:

**Կառափներ,** դրանց դերերը. կառափների դերը ոռոգվող հողագործության մեջ: Լծերը և լծասարքերը: Վարելու և հարթելու եղանակները:

**Ցանքերի խնամքը.** խնամքի գործնական ձևերը և մոգական միջոցառումները: Ոռոգում, պարարտացում (գոմաղբ, ծերտ, մոխիր, փտած հարդ, հին ավերակների խամ հող և այլն), ոչխարի հոտի մակաղեցումը հերկի վրա, քարհավաք, քաղհան, վնասատուների դեմ մղվող պայքարի ձևերը և այլն:

**Դաշտամշակության համակարգերը.** եռադաշտ, բազմադաշտ, սերմնափոխություն (ցանքաշրջանառություն):

### *1.5. Բերքահավաքի և կալսող գործիքների ավանդական տեսակները, տիպաբանությունը և աշխատաեղանակները:*

Հնձի գործիքներ. պահունակավոր, բրոնզե և երկաթե մանգաղներ, ազգային գերանդիներ: Երկաթե մանգաղները որպես հացհնձի գործիքներ և մատնոցների ձևերը: Եվրոպական գերանդու մուտքը Հայաստան՝ Ռուսաստանի միջոցով: Հայ դարբինների պատրաստած ազգային գերանդիներ, նրանց ձևերն ու չափերը, կոթը և ձնը: Զնդանը, մուրճը և սրիչ քարերը, սրելու ձևերը: Գերանդու այս տեսակի վերացման ժամանակը և պատճառները: Եվրոպական գերանդու մուտքը և ժամանակը:

Հնձի օժանդակ գործիքները. փայտե եղան, դարբնի շինած երկաթե եղան: Գործարանային եղաններ, փոցխեր: Խոտկեռ կտուցաձև և այլն: Մանգաղով հնձողի լրացուցիչ հագուստամասեր՝ մորթուց և կտավից գոգնոց, մորթե ծնկակալներ, ռնապաններ, թևնոց, տրեխներ կամ գործվածքե ոտնամաններ, ձեռքով հացի և խոտի հունձ կատարելը և պատճառները:

Հնձած շերտի անունը, այն հավաքելու ձևերն ու անվանումնե-րը (խուրձ, բարդ, դեզ և այլն): Դիզելու կարգը և դեզի ձևը:

Բերքահավաքի ժամանակ կազմակերպվող ընկերակցու-թյունները, ձևերը, անվանումը: Փոխադարձ օգնություն: Վար-ձով աշխատողների հավաքման, վարձատրման կարգը (դրա-մով, բնամթերքով, չափը): Կերակրվելու և հանգստանալու ռե-ժիմը: Ուտեստի տեսականին: Փոխադրամիջոցներ (անիվա-վոր և անանիվ), զրաստներ, շալակով փոխադրելու պատճառ-ները և այլն:

**Կալսում.** կալսոցի անվանումը (կալոց և այլն): Կալատեղը և նրա նախապատրաստման ձևերը (հարթեցնելը, ցեխով պատրաստելը և պնդացնելը): Կալը ընդարձակ կտորների վրա, պատճառները: Կալին կից մարագը (գետնափոր կամ գետներեսին լինելը), կալը մարագին կից պատրաստելու պատճառները:

**Կալսող գործիքներ.** թակեր, որոնցով խուրձը կամ կալի մնացորդներն էին թակում, մանրացնում: **Կոռի**՝ անասունների այն խումբը, որոնք ոտքերով տրորելու եղանակով, կալի երեսին շրջելով կատարում էին կալսում (հացահատիկ, կտավատ): Եզների խմբի՝ տրորման եղանակով կալսելու հնավանդ այս ձևի պահպանվածությունը Սասունում, պատճառները:

**Կամը և դրա ձևերը.** մեկ կամ երկու տախտակից լինելը: Կամի հակառակ երեսին սուր շեղբերով վանակատ կոչված քարի ամրացումը: Կամի վարպետները: Կամի լծասարքը: Գլանաձև քարե կալսիչներ: Կալսելու ձևերը:

**Կամնասայլ-ճառճառ** (պտտվող անիվների վրա ուրագաձև գործիքներ ունեցող սահնակաձև կալսող գործիք): Ճարճառ-կամնասայլի սակավ տարածվածությունը: Կամ և կամնասայլ չունեցող շրջանները: Լծկանը (եզ, ձի, գոմեշ, էշ, կով), լծասար-

քը՝ տեղական անվանումները: Կալը խառնելու և շրջելու կարգը, կալի ավարտը և թեղելու եղանակը: Էրնելու՝ քամուն տալու ձևը:

**Հալ**՝ տախտակե փոքր գործիք, որով կալատերը հավաքում էր ավարտած կալը:

**Կառափ-կալքաշ**՝ տախտակե մեծ գործիք, որով լծկանի օգնությամբ հավաքում էին ավարտված կալը:

**Օժանդակ պարագաներ.** հոսելիներ, եղաններ, թիեր, ցախավելներ, մաղեր, քթոցներ, պարկեր և այլն, դրանց տեղական անվանումները: Մեխանիկական և դիզելային կալսիչների մուտքը, քամահար մեքենաներ, կոմբայններ և այլն:

**Նյութերի վերամշակման գործիքներ.** սանդեր, աղորիքներ, տեփուրներ, մաղերի, պարկերի տեսակներ, ամբար-փեթակներ, հորեր և պահեստավորման այլ միջոցներ, դրանց գոյատևման ժամանակները: Հարդի տեղափոխումը մարագ: Ընկերությունների կազմակերպման բնույթը, սկզբունքները, փոխօգնության ձևերը և միջոցառումները: Բերքահավաքի ու կալսոցի հետ կապված հավատալիքային դրսևորումները:

### *1.6. Այգեգործությունը, խաղողագործությունը, գինեգործությունը Հայաստանում (ավանդույթ և արդիականություն):*

Այգեգործությունը և պտղաբուծությունը Հայաստանում, դրանց տարածվածությունը: Հայկական լեռնաշխարհը - այգեգործության, խաղողամշակության, պտղաբուծության հնագույն հայրենիք: Խաղողի և պտղի տեսակները, անվանումները: Այգեգործության և պտղաբուծության տեխնիկան: Այգին փորելու և թմբեր պատրաստելու եղանակները: Տնկերը, դասավորությունը (շարքավոր կամ անկանոն): Ջրելու համակարգը, ժամանակը: Այգեգործության, պտղաբուծության աշ-

խատավորները, մասնակցությունը. տղամարդիկ, կանայք, անչափահասները: Այգիների պաշտպանությունը ձմեռվա ցրտից, վնասատուներից, գողերից: Ցանկապատների ձևերը: Ակնահարությունից պաշտպանելու հնարները:

Այգեկութ և պտուղների քաղը, գործածվող գործիքներն ու ամանները: Ընկերությունների կազմակերպումը, պայմանները: Բուժման եղանակները: Ոռոգման համակարգերը: Խաղողի մշակության և գինեգործության կենտրոնները, ավանդական եղանակներն ու միջոցները: Գործածված և գործածվող տեխնիկան: Բերքի անկորուստ ստացման համար կիրառվող իրական և սնահավատ գործողությունները, արարողակարգերը:

Բերքահավաքի ձևերը և գործածվող պարագաները: Փոխադարձ օգնության համակարգերը, տոներն ու հանդեսները: Հին աշխարհում գինու հնձանների հայտնագործությունը պատմական Հայաստանում: Գինեգործություն, տեխնիկան: Ճմլելու եղանակները, սարքերը, մեքենաները: Պահածոյացման, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների պատրաստման, բուսական յուղի ստացման եղանակներն ու միջոցները անցյալում ու ներկայում: Օղի թորելու սարքը և թորելու եղանակները, ժողովրդական հմտություններն ու թորելու հետ կապված սովորույթները: Մաճառը, գինին և օղին պահպանելու պարագաները և եղանակները:

**Բանջարաբուծություն և բոստանային կուլտուրաների մշակություն:** Մշակովի բույսերի տեսակները (համեմ, կոտեմ և այլն), դրանց մշակման եղանակները, շուկա հանելու հանգամանքները, մշակողները:

**Բոստանային կուլտուրաներ:** Գլխավոր բույսերը (կարտոֆիլ, կաղամբ, ձմերուկ, սեխ, դդում, սմբուկ, լոլիկ, սոխ, բազուկ, գազար, կանաչի, սխտոր, ոսպ), տեղականը և ներմուծվա-

ծը: Նշել, թե սրանցից որոնք էին ավելի ուշ ժամանակներում բերվել Հայաստան և որտեղից, որոնք էին նորամուծությունները: Բանջարաբուծության և բոստանամշակության տեխնիկան, գործիքները, սերմնափոխության համակարգը, ոռոգման համակարգը: Այդ բույսերի դերը տնտեսության մեջ, դրանք շուկա հանելը, վաճառելն ու փոխանակելը հնում և ներկայում:

**Պտղաբուծություն:** Տարածվածությունը: Պտղատու ծառերի և խաղողի այգիների հիմնում առանձին-առանձին կամ միասին: Այգի-պարտեզի հողը մշակելու եղանակները, ոռոգման համակարգը: Ծառերի խնամքը վաղ գարնանը, ամռանը, ձմեռնամուտին: Վերամշակումը, չրեր պատրաստելը կամ խմիչքներ ստանալը: Միրգը թարմ պահելու ձևերը՝ կախելով, հողի մեջ թաղելով, թթու դնելով: Օշարակներ: Խաղողի, պտուղների և դրանցից պատրաստված խմիչքների վաճառքի ձևերը: Բանջարաբուծության և բոստանամշակության տեխնիկան, գործիքները, դրանց ծագումը: Փոփոխությունները ներկայումս:

**Այգեգործության և բանջարաբուծության գործիքներ:**

1. Միակողմանի և երկկողմանի հարվածային գործիքներ՝ քլունգներ և հողուրագներ, դրանց ձևերը: Երկկողմանի հողուրագներ:

2. Փորող բահեր, հաստ մատներով եղաններ, դրանց անվանումները, դանակաձև և կեռածայր հոտոցներ, մանգաղաձև հոտոցներ, կեռածայր և երկարակոթ հոտոցներ, կեռածայր դանակներ, սղոցներ, ճյուղերը ճկող գործիքներ, դրանց պատրաստման եղանակը և վայրը: Այգեգործության և բանջարաբուծության բնագավառում տղամարդկանց ու կանանց աշխատանքի բնութագրումը:

*1.7. Արորագութանային երկրագործության ավանդական համագործակցության ձևերը հայոց մեջ:*

Երկրագործության մեջ աշխատանքի կազմակերպման հնավանդ կոոպերացիաները (հարակաշ, զուբարա), համագործակցության և փոխգործակցության ձևերը, դրանց մնացուկները ներկայումս՝ վարի, հնձի, կալսման, նյութերի վերամշակման և այլ աշխատանքներում: Գութանով, եզներով, սերմով, աշխատող ձեռքերով միավորվող ընտանիքների փոխհարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները: Համագործակցության դրսևորումները:

*1.8. Ձիթհանության մշակույթը Հայաստանում:*

Ուսումնասիրության արդյունքներն ու գրականությունը: Ձիթատու բույսերի տեսակներն ու մշակման եղանակները: Ձեթի ստացման ժողովրդական եղանակները: Ձիթատու բույսերի և ձեթի օգտագործման ժողովրդական եղանակները: Ձեթի և ձիթագործության դերը բժշկության բնագավառում և ժողովրդական տնտեսության այլ ոլորտներում:

*1.9. Երկրագործական պաշտամունքի տարեշրջանը:*

Երկրագործական պաշտամունքի հետքերը հայոց մեջ: Հողի պաշտամունք: Բնության մեռնող և հարություն առնող աստվածություններ: Գործիքների պաշտամունքի հետքեր. սրանց կապը աստեղային կրոնի հետ: Լծու անասունների հետ կապված պաշտամունքը և պաշտպանելու հմայական հնարները: Ջրի պաշտամունք. ջրային տարերքի աստվածություններ: Վիշապաքարերը որպես Արա գեղեցիկի արձաններ (ըստ Գր. Ղափանցյանի): Վիշապներն ըստ Ն. Մառի, Բ. Պիոտրովսկու, Մ. Աբեղյանի ու Աս. Մնացականյանի:

Ծեսեր և ծիսական արարողություններ (համայնական և ներզբաղմունքային). ա) գյուղատնտեսությանը սպառնացող աղետները՝ երաշտ, մորեխ և այլն, բ) բնական արտասովոր երևույթներ և բնական աղետներ (արևի կամ լուսնի խավարումներ, ջրհեղեղ, երկրաշարժ և այլն), գ) եղանակի անոմալիաներ (երկարատև անձրևներ, սառնամանիքներ և այլն): Ծեսեր և արարողություններ՝ երկրագործական ամեն ցիկլի սկզբի և ավարտի հետ կապված, դ) աշխատանքային օրվա սկզբի հաջողությունը նշանավորող արարողություն, աղոթք, յուրաքանչյուր նոր գործ սկսելուց առաջ հաջողություն ապահովող ծիսական արարողություն, զ) զբաղմունքի հովանավոր սրբի կամ ոգիների պատվին մատուցվող ծիսակատարություններ:

Երկրագործությունը հովանավորող ոգիները, նրանց ուղղված աղոթքներն ու զոհաբերությունները: Արտերը կարկտից, մկներից, մորեխներից, թռչուններից և այլ վնասատուներից, չար աչքից պահպանելու ժողովրդական հնարները: Եղանակը կանխագուշակելու ժողովրդական հնարները:

**Վարելու ընթացքի հետ կապված պաշտամունք:**

Տարին բոլոր գործող կրոնական մտահայեցողությունների անընդմեջ շղթան՝ կապված ցանքի նախապատրաստման, կատարման, խնամքի, աղետների կանխման, բերքահավաքի, կալսման, նյութերի վերամշակման հաջողությունն ապահովելու հետ: Ձեռնարկվող միջոցառումները. իրական և սնապաշտական, տեսակները, ծիսակատարությունները: Երկրագործական բնույթ ունեցող տոները: Նոր տարի, Ս. Սարգիս, Բարեկենդան, Ծաղկազարդ, Համբարձում:

## Գրականություն

**Ա. Հիմնական**


1. **Ալիշան Ղ.,** Հայ բուսակ կամ բուսաբանություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, 697 էջ:

2. **Աղանյան Գ., Բազեյան Կ.,** Տնային տնտեսությունները Շիրակի բնակչության արդի կենցաղում // Գիտական աշխատություններ. V, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2002:

3. **Առաքելյան Բ., Կարախանյան Գ.,** Գառնի III, 1949-1956 թթ. պեղումների արդյունքները (միջին դարեր), Եր., 1962:

4. **Առաքելյան Բ.,** Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում // Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Եր., 1964, էջ 147-170:

5. **Առաքելյան Գ.,** Բամբակագործությունը Ելիզավետպոլի նահանգում (XIX դ. երկրորդ կես) // ՊԲՀ, 2007, թիվ 3, էջ 181-185:

6. **Առաքելյան Գ.,** Խաղողագործությունն ու ոգելից խմիչքների արտադրությունը Ելիզավետպոլի նահանգում (XIX դ.) // ՊԲՀ, 2006, թիվ 3, էջ 126-134:

7. **Ավետիսյան Խ.,** Բամբակագործության զարգացումը Հայաստանում XIX դ. և XX դ. սկզբին // Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Եր., 1964:

8. **Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ.,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Եր., 2006:

9. **Բաղալյան Ռ.,** Պատմական Հայաստանի ձեռքի գործիքների տեխնոլոգիայի էվոլյուցիայի մի քանի հարցեր // ԲԵՀ, 1973, թիվ 1, էջ 273-278:

10. **Բայբուրդյան Ե.,** Աշխատանքի գործիքները Հին Հայաստանում //ՀԽՍՀ պատմ. և գրակ. ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 1, Եր., 1938, էջ 193-231:

11. **Բարխուդարյան Ս.,** Դիտողություններ, նոր նյութեր Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ // Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Եր., 1964:

12. **Բդոյան Վ.,** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:

13. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Եր., 1874, էջ 30-50, 211-214:

14. **Բդոյան Վ.,** Հնձի գործիքները Հայաստանում // ՊԲՀ, 1968, 3, էջ 182-190:

15. **Բդոյան Վ.,** Պոնտոսի հայերի վարող գործիքները // ՊԲՀ, 1971, 4, էջ 197-205:

16. **Գասպարյան Բ.,** Արենի I քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները // «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկույցների ժողովածու, 17-19 հոկտեմբեր, 2013, Եր., 2014, էջ 183-187:

17. **Գասպարյան Բ., Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա.,** Ոգելից խմիչքների հիշատակությունը Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ և դրանց պատմամշակութային համատեքստը // էջմիածին, 2016, Ժ հոկտեմբեր, էջ 119-133:

18. **Դիլանյան Թ.,** Խաղողագործությունը և պտղաբուծությունը նախասովետական Հայաստանում // ԲՀԱ, 1970, №2, Եր., էջ 173-180:

19. **Զելինսկի Ս.,** Բույսերի գործածությունը Երևանի նահանգում // ԱՀ, գիրք Դ, թիվ 2, Թիֆլիս, 1898, էջ 177-202:

20. **Էփրիկեան Հ.,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903, 1905:

21. **Թորոսյան Հ.,** Հացահատիկային կուլտուրաների մշակությունը Արևելյան Հայաստանում XVII-XVIII դդ. // ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 103-110:

22. **Թորոսյան Ռ.,** Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Եր., 1976:

23. **Թումանյան Գ.,** Հնձանային մշակույթը Հայաստանում, Եր., 2008:

24. **Թումանյան Գ.,** Գինեգործության մշակույթը Հայաստանում, Եր., 2008:

25. **Լալայան Ե.,** Ջավախք, Երկեր, հինգ հատորով, հ. 1, Եր., 1983, էջ 109-116:

26. **Լալայան Ե.,** Վարանդա, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 69-75:

27. **Լալայան Ե.,** Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931:

28. **Լալայան Ե.,** Սիսիան, ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 105-172:

29. **Լալայան Ե.,** Բորչալուի գավառ, ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 113-268:

30. **Լալայան Ե.,** Վասպուրական, ԱՀ, գ. XX (№ 2), Թիֆլիս, 1910, էջ 116-180:

31. **Լալայան Ե.,** Գանձակի գավառ, ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 231-282:

32. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946, էջ 15-29:

33. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 126-134:

34. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, պ. 12, Եր., 1981, էջ 9-84:

35. **Խանզադյան Է.,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, Եր., 1967:

36. **Խանզադյան Է.,** Գառնի, հ. 4, Եր., 1969:

37. **Խանզադյան Է.,** Էլառ-Դարանի, Եր., 1979:

38. **Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,** Մեծամոր, Եր., 1973:

39. **Խալփախչյան Հ.,** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Եր., 1961:

40. **Կարապետյան Լ.,** Երկրագործական և անասնապահական պաշտամունքը Հայաստանում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում // ԲԵՀ, 1979, № 1, էջ 117-122:

41. **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա.** և ուրիշներ, Գինին հայկական մշակույթում, Եր., 2005:

42. **Հոբոսյան Ս.,** Արևելյան Հայաստանում տարածված ձիթատու բույսերը և դրանց օգտագործումը XIX դ. վերջին և XX դ. սկզբին // Հայրենագիտական հարցեր, Եր., 1984:

43. **Հոբոսյան Ս.,** «Այգին» միջնադարյան հայերեն վիմագրերում // Հայ ժողովրդական մշակույթ XII, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2004, էջ 80-85:

44. **Հոբոսյան Ս.,** Խաղողի մշակությունը Վայոց ձորում // Հայ ժողովրդական մշակույթ XIII, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., 2006, էջ 143-147:

45. **Հոբոսյան Ս.,** Հայոց ձիթհանության մշակույթը (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, գ. 23, Եր., 2007:

46. **Հոբոսյան Ս.,** Գինեգործությունը Լոռու մարզում ըստ հնագիտական նյութերի // Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XVI (Դ. Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 65-70:

47. **Հոբոսյան Ս., Սարատիկյան Ա.,** Գինեգործության նորահայտ կենտրոն Լոռիում // ԼՀԳ, 2019, № 3, էջ 256-267:

48. **Հոբոսյան Ս. և ուրիշներ,** Խաղողի և գինու հայոց մշակույթը, Եր., 2021, 437 էջ:

49. **Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բոբոխյան Ա., Դալլաքյան Մ., Հոբոսյան Ս., Գասպարյան Բ.,** Հայկական խաղող և գինի, Եր. 2017:

50. **Մալխասյան Հ.,** Հայ գեղջուկի ալբոմը, Թիֆլիս, Ա մաս, Դաշտային գործիքներ, Թիֆլիս, 1898, Բ մաս, Թիֆլիս, 1901:

51. **Սարդարյան Ս.,** Հայաստանը քաղաքակրթության օրրան, Եր., 2003:

52. **Սրվանձտյանց Գ.,** Մանանա. Բուսոց անուններ, Արոր կամ հարոր, Սայլ և սել, Հայաստանի երկրագործական գործիքներ, երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 251-364:

53. **Ստրաբոն,** Աշխարհագրություն, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, «Օտար աղբյուրները հայերի մասին», մատենաշար «Հունական աղբյուրներ», № 1, Եր., 1940:

54. **Քոչարյան Գ.,** Հայաստանի գյուղատնտեսությունը մ.թ.ա. VI–IV դդ. // ՊԲՀ, 2010, № 2, էջ 169-178, նույնի՝ Հայաստանի գյուղատնտեսությունը մ.թ.ա. III–I դդ. // ՊԲՀ, 2011, № 1, էջ 253-261:

55. **Амирьянц И.А,** Напитки народов Передней Азии. Хмельное и иное, напитки народов мира, М., 2008, с. 286-423.

56. **Арзуманян П.,** Плодоводство и виноградарство Армянской ССР, Ер., 1973.

57. Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 97-131.

58. **Арутюнян А.,** Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Ер., 2005.

59. **Арутюнян А.,** Виноградарство и виноделие в Армении,

Ер., 2007.

60. **Арутюнян Н.,** Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964.

61. **Громов Г., Новиков Ю.,** Некоторые вопросы агроэтнографических исследований // СЭ, 1967, № 4.

62. **Еремян С.,** Происхождение некоторых орудий пашенного земледелия в Древней Армении // В кн. Материалы по истории сельского хозяйства и крестьянства Армении, т. 1, Ер., 1964, с. 9-27.

63. **Есаян С.,** Оружие и военное дело Древней Армении (III-I тыс. д.н.э.), Ер., 1966.

64. **Зелинский С.,** Садоводство в Закавказском крае // СМИЭБГКЗК, Тифлис, 1888, т. 4, ч. 2, с. 1-135.

65. **Лисициан С.,** Очерки этнографии дореволюционной Армении // КЭС, 1955, № 1, М., с. 183-184.

66. **Мартиросян А.,** Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964.

67. **Марутян А.,** Армянские традиционные зернохранилища (по этнографическим материалам) // ВОН, 1987, № 7, с. 65-73.

68. **Пикичян Р.,** Земледельская обрядность в контексте «hоровелов» // «Հանդես ամսօրեա», 2002, էջ 441-461:

69. **Пиотровский Б.,** Археология Закавказья с древнейших времен до I тыс. до н.э., Л., 1948.

70. **Пиотровский Б.,** Кармир-блур, I, Ер., 1950.

71. **Пиотровский Б.,** Кармир-Блур II, Ер., 1952.

72. **Пиотровский Б.,** Кармир-блур, III, Ер., 1956.

73. **Пиотровский Б.,** Ванское царство (Урарту), М., 1959.

74. **Пиотровский Б.,** Основные этапы древнейшего земледелия в Армении // ИФЖ, 1961, № 3-4, с. 108-121.

75. **Обосян С. Г., Габриелян М. Г.,** Земледелие и обработка зерновых культур // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 104-123.

76. **Обосян С. Г.,** Виноградарство и виноделие // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 124-132.

77. **Саркисян Г.Г.,** Среда обитания // Армяне. Серия «Народы и культуры», М., 2012, с. 97-104.

78. **Тер-Саркисянц А.Е.,** Армяне Нагорного Карабаха. История, Культура, Традиции, М., 2015:

79. **Шнирельман В.,** Возникновение производящего хозяйства, М., 1989.

80. **Хачатрян Т.,** Древняя культура Ширака, Ер., 1975.

81. **Хачатрян Т.,** Материальная культура древнего Артика, Ер., 1963.

82. **Хачатрян Т.,** Орудия труда в эпоху поздней бронзы и раннего железа Армении, ԱՊՊԹ, V, 1959.

83. **Филлипс Р.,** История вина, М., 2004.

Բ. Լրացուցիչ

1. **Առաքելյան Հ.**, Զեյթուն, Թիֆլիս, 1896:

2. **Ավագյան Ս**., Արճակ // ՀԱԲ, գ. 8, Եր., 1978, էջ 22-23:

3. **Բենսե,** Բուլանըխ կամ Հարք գավառ, ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899, գ. Զ, Թիֆլիս, 1900:

4. **Գաբիկյան Կ.,** Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1912, 1967:

5. **Գյոզալյան Գ.,** Մուսա լեռան ազգագրությունը, Եր., 2001:

6. **Գևորգյան Գ.,** Ղզլար // ՀԱԲ, գ. 10, Եր., 1980 էջ 16-23:

7. **Դնեջյան Ս.,** Լոռի բերդ II (միջին բրոնզ), Եր., 2004:

8. **Զեյթունցի,** Զեյթունի անցեալէն և ներկայէն, Վիեննա, 1900:

9. **Թաղիադյան Մ.,** Ճանապարհորդական նոթեր, հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր (Գրական ժառանգություն), Եր., 1975, հ. 9, էջ 5-618:

10. **Թաղիադյան Մ.,** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, «Գրական ժառանգություն», հ. 9, Եր., 1975, էջ 23-199:

11. Թասղ բեր, կազմ. **Ա. Փաշայան**, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2006:

12. **Թոռլաքյան Բ.,** Համշենահայերի ազգագրությունը // ՀԱԲ, գ. 13, Եր., 1981:

13. **Թուրշյան Ա.,** Ջրաօգտագործման համակարգը Վասպուրականում // ՊԲՀ, 1967, թիվ 2, էջ 246-253:

14. **Ժամկոչյան Բ.,** Հայնի Պեյրութ, 1952, էջ 21-29:

15. **Խաչատրյան Ժ.,** Անդաստան հանել, անձրև բերելու և օրհնանքի ծես եկեղեցում // Երևան քաղաքի թանգարանի գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2009, էջ 49-55:

16. **Խալփախչյան Հ. Խ.,** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Եր., 1961:

17. **Խաչատրյան Ռ.,** Առաջնապտղի ծիսախորհուրդն ու խաղող-գինի-կարաս գովերգությունները հայ ծիսաերգային բանահյուսության մեջ //ՊԲՀ, 2007, № 2, էջ 273-286:

18. **Կարապետյան Ե.,** Սասուն, ազգագրական նյութեր, Եր., 1962, էջ 11-19:

19. **Խառատյան Ա.,** Զմյուռնիայի հայ վաճառականությունը միջազգային առևտրում (XVII-XVIII դդ.) // ՊԲՀ, 1989, № 3, էջ 66-80:

20. **Հալաջյան Գ.,** Դերսիմի հայերի ազգագրություն // ՀԱԲ, գ. 5, Եր., 1973, էջ 102-129:

21. **Հակոբյան Գ.,** Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 128-138:

22. **Համբարյան Ա.,** Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Եր., 1965:

23. **Համբարյան Ա.,** Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմությունից (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Եր., 1983:

24. **Հովսեփյան Հովհ.,** Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Ազգագրական և բանահյուսական ժառանգություն 1, Եր., 2009, էջ 158-203:

25. **Հովսեփյան Ռ.,** Բուսական մնացորդներ Շենգավիթի դամբարանի կավանոթներից // Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, 3. ՀՀ ԳԱԱ Հնագիտ. և ազգ. ինստ., Եր., 2007, էջ 25-29:

26. **Ղասաբյան Զ.,** Զիթագործությունը Ուրարտուում // «Տեղեկագիր» հաս. գիտ. 1957, թիվ 4:

27. **Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքը և նրա պեղումները, Եր., հ. 1, 1952:

28. **Մելիք-Շահնազարեանց Կ.,** Ուղեցոյց գործնական գինեգործութեան, Տփխիս, 1885:

29. **Միրախորեան Մ.,** Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, հ. Ա, Կ. Պոլիս, 1885:

30. **Մխիթարեանց Ա.,** Փշրանքներ Շիրակի ամբարներից, ԷԱԺ, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապօլ, 1901:

31. **Մկրտչյան Ա.,** Հայոց տոնածիսական մշակույթը, Եր., 2016:

32. **Մնացականյան Ա.,** Հայկական զարդարվեստ, հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությու-

նը, Եր., 1955:
33. **Մուրադյան Հ.**, Համշենցի հայեր // ԱՀ, գ. Դ, 1898, № 2, Թիֆլիս, էջ 128-133:
34. **Նահապետյան Ռ.**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., 2004, էջ 30-35:
35. **Շիրմազան Գր.**, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Եր., 1962:
36. **Պապիկյան Ս.**, Խաչփնջերը երկրագործական հավատալիքների համակարգում // «Հայ ժողովրդական մշակույթ», XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., 2010, էջ 417-426:
37. Պատմություններ աղքատության մասին, գիրք 2-րդ, գիտական խմբագիրներ՝ Հ. Խառատյան, Հ. Մարության, Եր., 2007:
38. **Պետրոյան Վ.**, Սասուն, Եր., 1966, էջ 73-104:
39. **Ջալալբեկյան Ռ.**, Մոխրաբլուրի պատվարները / ՊԲՀ, 1974, № 4, էջ 157-162:
40. **Սարգիսեան Հր. քհն.**, Բալու, իր սովորութիւնները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրէ, 1932:
41. **Սարդարյան Ս.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967:
42. **Վիլյամս Վ.**, Երկրագործության հիմունքներ, Եր., 1948:
43. **Փափազյան Վ.**, Հայ բոշաներ // ԱՀ, գ. Դ, 1898, № 2, Թիֆլիս, 1898, էջ 126-131:

44. **Քալանթար Աշխ.**, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում (Հայաստան քարե դարից միջնադար: Երկերի ժողովածու), Եր., 2007:

45. **Абелов Н.,** Экономический быт гос. крестьян Елисаветпольского уезда, Елисаветпольской губ., МИЭБГКЗК, т. 7 1887.

46. **Адонц М.,** Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ер., 1957.

47. **Антонова Е.,** Очерки культуры древних земледельцев Передней и Средней Азии, М., 1984.

48. **Аракелян Б.,** Гарни I, II. Результаты работ археологической экспедиции института истории АН Арм. ССР, Ер., 1957.

49. **Аргутинский-Долгоруков Х.А.М.,** Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях, Тифлис, 1897.

50. **Арутюнов С.,** Адаптивное значение культурного полиморфизма // ЭО, № 4, 1993.

51. **Вавилов Н.,** Центры происхождения культурных растений / Ленинград, госиздат, 1926, -248 с.

52. **Вавилов Н.,** Дикие сородичи плодовых деревьев Азиатской части СССР и Кавказа и проблема происхождения плодовых деревьев // Избр. труды. М.: Л., 1967, т. 2, 7, с. 225-247:

53. **Вермишев Х.,** Земледелие у государственных крестьян Закавказского края. Свод материалов по изучению государственных крестьян Закавказского края, 1888, т. 4.

54. **Деконский А.,** Экономический быт государственных крестьян в западной части Шаруро–Даралагезского уезда Эриванской губернии // МИЭБГКЗК, 1885, т. 1, вып. 5, с. 649-731.

55. **Ерицов А.,** Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветполькой губ. // МИЭБГКЗК, 1886, т. 2, вып. 3, с. 1-265.

56. **Есаян С.,** Древняя культура племен Северо-восточной Армении, Ер., 1976.

57. **Жуковский П.,** Культурные растения и их сородичи, Ленинград, 1964.

58. **Заваров С.**, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карской области, Тифлис, 1899.

59. **Зелинский С.,** Экономический быт гос. крестьян в Шорагале, Александрапольского уезда, Эриванской губернии, МИЭБГКЗК, т. 1, Тифлис, 1885.

60. **Краснов Ю.,** Древнейшие упряжные пахотные орудия, М., 1975.

61. Краткий очерк земледелия Закавказом, труды КОСХ, 9-10, Тифлис, 1887.

62. **Кузмин С.,** Сельскохозяйственные очерки Новобаязетского уезда, КОСХ, Тифлис, 1879.

63. **Массон В.,** Экономика и социальный строй древних обществ, Ленинград, 1978.

64. **Никифоров Н.,** Экономический быт гос. крестьян западной части Нахичеванского уезда Эриванской губ., МИЭБГКЗК, т. 1, Тифлис, 1885.

65. **Новиков Ю.,** Генезис плуга и этнография // СЭ, 1963, № 2.

66. **Овсепян Р.,** Палеоботанические материалы Араташенского неолитического поселения (предварительные результаты исследований 2003-2004 гг.) // Культура Древней Армении, XIII. Материалы респуб. науч. конф. Ер., 2005, с. 51-53.

67. **Пузанов Ю.,** Вопросы экономического развития // Армения. Проблемы независимого развития. М., 1998, с. 227-252.

68. Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе. Эриванская губерния. Тифлис, 1896. Вып. 6.

69. Сборник статистических данных о землевладении и

способах хозяйства в пяти губерниях Закавказского края, Тифлис, 1899.

70. **Туманян О.,** Экономическое развитие Армении, Ер., 1954, ч. 1.

71. **Хан-Агов А.,** Экономический быт государственных крестьян Эчмиадзинского и Сурмалинского уездов Эриванской губернии // МИЭБГКЗК. 1886, т. 3, ч. 1, с. 227-455.

72. **Хатисов И.,** Хлопководство в Закавказье // СМИЭБГКЗК. 1988, т. 4, ч. 2, с. 279-328.

73. **Худабов В.,** Закавказье (Историко-экономический очерк). М.: -Л., 1926.

74. **Шнирельман В.,** Возникновение производящего хозяйства, М., 1989.

75. Энциклопедия виноградарства. Кишинев, 1986, т. 2.

76. **Ягодинский П.,** Экономический быт государственных крестьян в Ордубадском участке Нахичеванского уезда Эриванской губернии // МИЭБГКЗК, 1885, т. 1, вып. 5. с. 609-648.

# ԹԵՄԱ 2. ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## *2.1. Հայկական լեռնաշխարհը որպես անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն:*

Անասնապահական մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրը հայ ազգագրության մեջ:

Հնագիտության, հնակենդանաբանության, պատմագրության և ազգագրության տվյալները հայոց անասնապահական մշակույթի վերաբերյալ, նրա տեղը տնտեսական կյանքում: Շրջաններ, որտեղ անասնապահությունը հիմնական զբաղմունքի էր վերածվել: Պատճառները:

Անասնապահության հիմնական ճյուղերը և դրանց հարաբերակցությունը արտադրական մշակույթի մյուս ճյուղերի նկատմամբ:

Բազմացվող կենդանիների տեսակները և դերերը: Հասարակական կարգով օգտագործվող ցլեր, նժույգներ, խոյեր, անասուններն ազնվացնելու ձևերը, ցլերի և խոյերի տերերին վարձատրելու կարգը:

Ամառային և ձմեռային մոտ և հեռավոր արոտատեղիները: Ամառանոց տեղափոխվելու ընթացքը, նկարագրությունը: Հովիվներ վարձելու կարգը, հագուստը, ոտնամանները, վարձող համայնքի պարտականությունները հագուստով, ապրուստով ապահովելիս: Նրանց աշխատանքային ժամանակամիջոցը, իրավունքներն ու պարտականությունները: Անասնապահ հովիվների ընտրությունը և նրանց կոչումները: Արոտատեղերի բաշխման կարգն անասնապահ խմբերի միջև:

Անասնապահների աշխատանքի բաժանման կարգն ընտանիքում: Անասունները գողերից ու գիշատիչներից պաշտպանելու իրական և հմայական հնարները: Դրանց հիվանդությունների տեսակները և բուժման իրական ու մոգական միջոցները: Անասունների սեփականության նշանները (ականջները կտրելով ու ճեղքելով, դեմքերը կամ ազդրերը դաջելով՝ նշաններ թողնելը): Տոներ, ծիսակատարություններ՝ կապված անասնապահության հետ: Անասունների գանգերը, եղջյուրները և այլ մասերը պաշտելու սովորությունները: Ծախված և գնված անասունների նկատմամբ կիրառվող սովորությունները: Ոչխար խուզելու գործիքները և խուզելու ձևերը:

### *2.2. Անասնապահության ավանդական ձևերը և աշխատանքի կազմակերպման հնավանդ սկզբունքները հայոց մեջ:*

Երկրագործության և անասնապահության համակցված բնույթը, զարգացման միտումները, անասնապահության զարգացման առանձնահատկությունները Հայաստանում:

Նստակյաց և հեռագնա անասնապահություն, դրանց դրսևորման ձևերը հայոց մեջ (տիպերը Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններում): Ամառային և ձմեռային արոտավայրեր և կացարաններ: Անասունների արածեցման և աշխատանքի կազմակերպման համագործակցության ավանդական սկզբունքները, ձևերը և սովորույթները: Հովիվներին վարձելու պայմանները, վերաբերմունքը: Տղամարդկանց և կանանց մասնակցության բնույթը: Մանկան աշխատանքի կիրառման եղանակները: Հովվի հագուստեղենը, մահակների ձևերը և առօրյա օգտագործման պարագաները:

Կաթնատնտեսություն: Կաթի մշակման ժողովրդական եղանակները և հմտությունները: Կաթնամթերքի տեսակները:

Կաթի ընկերակցությունները. անվանումները (**խաբ, խաբ ու խազ, փոխարա**), բանավոր օրենքները, փոխ տալու ամանները, չափելու ձևերը, հերթական կարգը, անարատությունը պահպանելու պայմանները: **Խաբի** տարածման շրջանները, նպատակը, բնույթը: Փոխադարձ օգնության ձևերը: Օրական քանի՞ անգամ էին կթում, կթելու վայրը, բեր անողները, բռնողները: Կաթը սարից գյուղ հոսեցնելու ձևերի վերաբերյալ հիշատակությունները: Կաթնատնտեսությունից ստացվող եկամուտները, զբաղվող կանայք, տղամարդկանց մասնակցության հարցը: Աշխատանքի սեռատարիքային բաժանման կարգը: Կթի ժամանակը, եղանակը, կավից, փայտից և պղնձից շինված ամանները: Կաթը քամելու պարագաները: Կաթը փռելու, սեր հավաքելու ձևերը, ամանեղենը: Խնոցիներ, դրանց հարելու ձևերը, կարագի ստացումը արագացնելու պայմանները շոգ և ցուրտ եղանակներին: Կարագը հալելու եղանակները և պահելու ամանեղենը: Պանիր պատրաստելը. գլուխ պանիր, թել պանիր պատրաստելը, և պանիրներին կանաչիներ խառնելը, ամանեղենը, պահելու եղանակները (տիկ, աղաջուր) և այլն: Թանից և շիճուկից լոռ պատրաստելու եղանակը, պահելու ամանեղենը, քամելու եղանակը, տոպրակը, լոռը տիկով պանրախառն պահելը, կճուճով թաղվող լոռի պահելու ձևերը, լոռի հետ կանաչ խառնելը և այլն: Չորթան պատրաստելու ձևերը: Կաթնամթերքները շուկա հանելը, փոխանակելն ու վաճառելը. նրանցով առևտուրը «դռան վրա»-փերեզակների միջոցով: Սնահավատություններ՝ կապված կովի ու ոչխարի կաթն ու մթերքները պահպանելու հետ. կթանը չար աչքից ու ոգիներից պահելու հավատալիքները. Այլոց կամ անզավակների ներկայությամբ չկթելը, կաթը չկեղծելու ու կեղծելու դեպքերը: Կարագ, մածուն, պանիր, լոռ, չորաթան

պատրաստելու և պահելու եղանակները, ամանեղենը, խնոցու տեսակները: Կաթնամթերք պատրաստողները, չար աչքից պահպանելու միջոցները (Ս. Ծնունդին և Ջրօրհնեքին, ս. Սարգսի տոնին, Բարեկենդանին, Տյառնընդառաջին, Մեծ Պահքին, Միջինքին, Ծաղկազարդին, Զատկին, Համբարձմանը և այլն):

### *2.3. Անասնապահության հաջողությունն ապահովող ժողովրդական հավատալիքների համակարգը:*

Համայնական և ներգբաղմունքային ծեսեր և ծիսական արարողություններ, նաև՝ իրավիճակային, տոնացուցային, հավատալիքներ և սնահավատություններ, ավանդույթներ և սովորույթներ, խորհրդանիշեր և տարբերանշաններ, հմտություններ և գիտելիքներ: Ժողովրդական բժշկության հնարները, գուշակության և սնոտիապաշտության արարողությունները: Անասնապահական տոներ, աղոթքներ, ծիսակատարություններ՝ առաջին անգամ արոտ հանելու, սար ուղարկելու, սարից իջնելու, գոմում պահելու հետ կապված: Սովորություններ վաճառված և նոր գնված անասունի վերաբերյալ: Պահպանակներ, աղոթքներ, անեծքներ, հմայություններ:

## Գրականություն

**Ա. Հիմնական**

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Եր., 1974, էջ 50-52:

2. **Եսայան Հ.,** Միջնադարյան Հայաստանի անասնապահությունն ըստ Աղստևի հովտի հուշարձանների // ԲԵՀ, 1988, 1, էջ 121-125:

3. **Եսայան Հ.,** Տավուշի անասնապահությունը զարգացած միջնադարում // ԲԵՀ, 1995, 3, էջ 158-162:

4. **Եսայան Ս.,** Ձին Ուրարտուի ռազմական գործում // «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1962, էջ 77-80:

5. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, Եր., 1946, էջ 16-19:

6. **Թեմուրճյան Մ. Մ.,** Անասնապահությունը Հայաստանում, ձեռագիր, անավարտ, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:

7. **Մկրտումյան Յու.,** Հյուսիս-արևելյան Հայաստանի հայերի տարեկան անասնապական ցիկլը նախահեղափոխական շրջանում // «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1963, № 7:

8. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի անասնապահական ընկերակցությունների կազմակերպման որոշ ձևեր ու սովորույթներ // ԲԵՀ, 2007, թիվ 2 (122), էջ 115-124:

9. **Նահապետյան Ռ.,** Հայկական լեռնաշխարհը՝ անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն (ըստ հնագիտական նյութերի և անտիկ գրավոր աղբյուրների) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Եր., 2020, էջ 28-39:

10. **Սարդարյան Ս.,** Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967:

11. **Վարդումյան Դ.,** Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956, էջ 42-43:

12. **Քալանթար Ա.,** Կաթնային արդյունքներ // ԱՀ, գ. Դ, № 2, 1898, էջ 276-292:

13. **Арутюнян Н.,** Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964.

14. **Вермишев Х. А.,** О скотоводстве на Кавказе в связи с пастбищным вопросом // МУКЛЗПИСК, т. 1, 1887.

15. **Калантар А.,** Состояние скотоводства на Кавказе // МУКЛЗПИСК, т. II, 1890.

16. **Лисициан С.,** Очерки этнографии дореволюционной Армении // КЭС, М., 1955, 1, с. 184-186.

17. **Мартиросян А.,** Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964.

18. **Мкртумян Ю.,** К изучению форм скотоводства у народов Закавказья // ВОН, 1968, № 12, с. 12-22.

19. **Мкртумян Ю.,** Скотоводство // Армяне. Серия. «Народы и культуры», М., 2012, с., 131-137.

20. **Мкртумян Ю.,** Формы сообществ по выпасу скота в армянской деревне второй половины XIX в. // Материалы сессии, посвящ. итогам археол. и этнограф. исследований 1964 г. // Тез. докл. Баку, 1965, с. 186-187.

21. **Мкртумян Ю.,** Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX – начало XX в.). Историко-Этнографическое исследование // АЭФ, 1974, вып. 6, с. 7-90.

22. **Мкртумян Ю.,** Формы скотоводства у народов Закавказья // Хозяйство материальная культура народов Кавказа в XIX-начале XX в., вып. I, М., 1971, 116-135.

23. **Пиотровский Б.,** Развитие скотоводства в древнейшем Закавказье // СА, вып. XXIII, М., 1955.

24. **Тамамшев А. З.,** Исслдования современного состояния ССР Армении, Тифлис, 1930.

25. **Тамамшев А. З.,** Крупный рогатый скот Армении в прошлом и настоящем, Ер., 1947.

26. **Чурсин Г.,** Амулеты и талисманы кавказских народов // СМОМПК, вып. 46, Махачкала, 1929.

Բ. Լրացուցիչ

1. **Ավագյան Գ.**, Ոչխարաբուծության զարգացման մի քանի հարցերը, Եր., 1961:

2. **Ավագյան Ս.,** Արճակ // ՀԱԲ, գ. 8, Եր., 1978, էջ 30-33:

3. **Գևորգյան Գ.,** Ղզլար // ՀԱԲ, գ. 10, Եր. 1980, էջ 23-27:

4. **Ժամկոչյան Բ.,** Հայնի, Պեյրութ, 1952, էջ 29-31:

5. **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 134-140:

6. **Կարապետյան Ե.,** Սասուն. Ազգագրական նյութեր, Եր., 1963, էջ 19-30:

7. **Հալաջյան Գ.,** Դերսիմի հայերի ազգագրությունը // ՀԱԲ, գ. 5, Եր., 1973, էջ 123-155:

8. **Հակոբյան Գ.,** Ներքին Բասենի ազգագրություն, Եր., 1974, էջ 138-144:

9. **Հովսեփյան Հովի.,** Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Եր., 2009, էջ 203-220:

10. **Ղարիբյան Ի.,** Արծափ, Եր., 2006, էջ 149-153:

11. **Մնացականյան Ա.,** Հայկական զարդարվեստ, Եր., 1955:

